ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական
փ., շ.1, Հեռ. (098)048046,
tumanyan.lori@mta.gov.am

N 495
*13 նոյեմբեր 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 34- 40-Ա որոշումները և համայնքի ղեկավարի թիվ 115-Ա- 121-Ա որոշումները:

Առդիր՝ 8 ֆայլ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 7-ի նիստի օրակարգը.

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
3.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԻՐԵՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ( ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ)ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
7.ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 5-րդ ենթակետով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Թումանյան համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 35 - Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2017 թ– ի տարեկան բյուջեն երրորդ եռամսյակում կատարվել է եկամուտների գծով՝ 90,9 %-ով, նախատեսված 91444.0 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 83104,4 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 24858,4 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 16518,8հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 66,5%: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ ) նախատեսված 66585,6 հազ. դրամը տրվել են ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան՝ 66585,6 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%:

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2017 թ-ի երրորդ եռամսյակում բյուջեն վարչական մասով նախատեսված էր 91444,0հազ.դրամ եկամուտ, փաստացի մուտքերը, կազմել են 83104,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 90,9 % : Սեփական եկամուտները ( հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 24858,4 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 16518,8 հազ.դրամ կամ կատարման տոկոսը՝ 66,5 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 66585,6 հազ. դրամը 66585,6 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2017 թ-ի երրորդ եռամսյակում նախատեսված էր 9177,2 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 6299,9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 68,4 %:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 500,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 285,2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 57,0 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 6280,0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 4123,8 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝65,7%:

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 597,2 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 611,7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 102,4 %:

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2017թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր նախատեսված էր 8304,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 5198,2 հազ. դրամ կամ կատարման

տոկոսը՝62,6 % ,այդ թվում հողի վարձավճարը նախատեսված էր 4384,0 հազ. դրամ,փաստացի մուտքը կազմում է 2176,4 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 49,6 %,գույքի վարձակալության պլանը նախատեսված էր 20,0 հազ.դրամ, փաստացի մուտք կատարվել՝23,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝115,0 %, տեղական վճարները նախատեսված է 3000,0 հազ. դրամ փաստացի մուտքը կազմում է 1928,5, կատարման տոկոսը՝64,3 %,օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված եկամուտները նախատեսված 900,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կատարվել է 1019,1 հազար դրամ,կատարման կատարման տոկոսը՝ 113,2 %:

Պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նախատեսված էր 700,0 հազ. դրամ,որը չի տրվել երրորդ եռամսյակի ընթացքում, կատարման տոկոսը՝ 0 %:

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 66585,6 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝66585,6 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%:

2. Բյուջեի վարչական մասի ծախսերը

Բյուջեի վարչական մասի ծախսերը երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 91444,0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 73453,6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 80,3 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են.

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2017 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 54680,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 43031,4 հազ.դրամ կատարման տոկոսը՝ 78,7 %:

Զբոսաշրջության համար նախատեսված էր 270,0 հազ. դրամ ծախս,փաստացի կատարվել է 200,0 հազ.դրամ ծախս, կատարման տոկոսը՝ 74,1 %: :

Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 12000,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 9900,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 82,5 % ,այդ ծախսը կատարվել է համայնքի աղբահանությունը իրականացնելու համար:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության համար նախատեսված ծախսը կազմում է 1950,0 հազ. դրամ, փաստացի ծախսը 852,5 հազ. դրամ է կատարման տոկոսը 43,7%,այդ թվում փողոցների լուսավորության գծով ծախսերը 852,5 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 43,7 %:

Առողջապահության համար նախատեսված էր 300.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել:

Կրթության համար 19884.0 հազ.դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 18079,7 հազ. դրամ, կատարման տոկոսը 90,9 %,այդ թվում նախադպրոցական կրթության համար նախատեսված էր 14814,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 14029,7 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 94,7 %,արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված էր 4740.0 հազ.դրամ ծախս, որի փաստացի ծախսը կազմել է 3720,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 78,5%, կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների համար նախատեսված էր 330,0 հազ. դրամ ծախս, փաստացի կատարվել է 330,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100,0%:

Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 1500,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 1340,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 89,3%:

2) ըստ տնտեսագիտական դասակարգման 2017 թ-ի բյուջեն երրորդ եռամսյակի ընթացքում կատարվել է.

ա) աշխատանքի վարձատրության համար նախատեսված էր 37600,0 հազ.դրամ ծախս, փաստացի կատարվել է 32081,4 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 85,3%,

բ) ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսված էր 17130.0 հազ. դրամ ծախս , փաստացի կատարվել է 10793.5 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ կատարման տոկոսը՝ 63,0 %,

գ) ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ նախատեսված էր 34124.0 հազ.դրամ,փաստացի ծախսը կազմել է 29129.7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 85,7 %,

դ) սոցիալական ապահովագրության ծախսերը՝ այդ թվում բյուջեից այլ նպաստները նախատեսված էր 1500,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 1340,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 89.3%,

ե) այլ ծախսերը նախատեսված էր 1090.0 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել 109.0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 10.0 %:

3. Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները առաջացել են տարեսկզբի ազատ մնացորդից՝5885,0 հազ դրամ և վարչական բյուջեից ֆոնդային բյուջե կատարվող հատկացման հաշվին,որը երրորդ եռամսյակի ընթացքում կազմում է 700.0 հազ. դրամ:

4. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2017թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 6585.0 հազ.դրամ ծախս,փաստացի ծախսը կազմել է 5363,8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝81,5 %:

1) Վարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված էր 1200 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել է 1040,0 հազ դրամ կամ կատարման տոկոսը՝86,7%:
2) Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար նախատեսված էր 4885,0 հազ. դրամ ծախս, կատարվել է ծախս 3840,8 հազ. դրամ, կատարման տոկոսը՝78,6 %:
3) Ոչ նյութական ակտիվների գծով ծախսերը՝ նախատեսված էր 500 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել է 483,0 հազ դրամ կամ կատարման տոկոսը՝96,6 %:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ՋԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.
1.Գույքի 187715283 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով,որից՝
1)հիմնական միջոցներ՝185802700 հազար ՀՀ դրամ,
2)այլ շինություններ՝1663.4քմ,
3)պաշարներ՝ 1912583 հազար դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29 կետով, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածով և <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի Լորուտ գյուղական համայնքում 0,02 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխման նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 14.09.2017թ. թիվ 97 դրական եզրակացությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 06-045-0183-0009 ծածկագիրը կրող 0,02 հա հողամասի հողօգտագործման սխեման՝ համաձայն հավելվածի:
2.Թումանյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,02 հա /կադաստրային ծածկագիր՝ 06-045-0183-0009/ գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա՝ կապի օբյեկտների հողերի գործառնական նշանակության:
3.Թումանյան համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:
4.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ կազմելու համապատասխան փաստաթղթեր՝ հետագայում այն օտարելու նպատակով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԻՐԵՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ)ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջի և հիմք ընդունելով ՀՀ վարչապետին ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսի գրությունը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի հանձնարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականը մարզպետներին և ՀՀ Լոռու մարզպետի 04.08.2017թ. թիվ 101/111.4/3880-17 գրությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Քարինջ գյուղի Մերուժան Եղինյանի փողոց թիվ 12/1 և Լորուտ գյուղի 11 փողոց 1/1 թիվ հասցեներում գտնվող եկեղեցիների շենքերը իրենց սպասարկման և պահպանության հողամասերով անհատույց /նվիրատվության կարգով/ օտարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 7-ի <<Թումանյան համայնքի 2017թ. բյուջեն հաստատելու մասին >> թիվ 69 -Ն որոշումը, Թումանյան համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը, Թումանյան համայնքի Ահնիձոր բնակավայրի վարչական ղեկավար, հանգուցյալ՝ Վանիկ Քարյանի ընտանիքին դրամական օգնություն տալու մասին Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը և Թումանյան համայնքի բնակիչների դիմումերը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյանի համայնքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝համաձայն հավելվածի:
2.Թումանյանի համայնքապետարանի գանձապահ Մարիամ Մխեյանին լիազորել Արդշինինվեստ բանկ Ալավերդու մասնաճյուղից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 39-Ա որոշման

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1)Քառյան Հայկ Վանիկի - գ. Աhնիձոր -50000 դրամ,
2) Ասրյան Անահիտ Մովսեսի-ք. Թումանայն-15000 դրամ,
3) Մելքոնյան Ախդա Սամվելի-ք. Թումանյան- 15000 դրամ,
4) Շահվերդյան Ալետա Ալբերտի-ք. Թումանյան-15000 դրամ,
5) Ռամազյան Լյովա Վասիլի-ք. Թումանյան - 15000 դրամ,
6) Մարուքյան Արփիկ Մեխակի-ք. Թումանյան - 15000 դրամ,
7)Ռամազյան Հարություն Լյովայի -ք. Թումանյան- 15000 դրամ,
8)Մելքումյան Արմինե Ռուշանի - ք. Թումանյան - 15000 դրամ,
9)Ղամբարյան Սոֆյա Սարգսի - ք. Թումանյան - 10000 դրամ,
10)Պապոյան Զոյա Վարշամի - ք. Թումանյան - 20000 դրամ,
11)Աստրյան Ռաֆիկ Մերյոժայի-գ. Լորուտ - 15000 դրամ,
12)Զարինյան Վոլոդյա Թաթոսի -գ. Լորուտ - 15000 դրամ,
13)Գևորգյան Արայիկ Վարուժանի -գ. Լորուտ - 20000 դրամ,
14)Նասիբյան Օֆիկ Սաղաթելի -գ. Լորուտ - 20000 դրամ,
15)Ստեփանյան Սոֆյա Սաղաթելի -գ. Լորուտ - 20000 դրամ,
16) Հարությունյան Լենիչկա Սիմոնի -գ. Լորուտ- 20000 դրամ,
17)Արզումանյան Վասիլ Լիպարիտի -գ. Լորուտ- 10000 դրամ,
18)Սարգսյան Գարիկ Յաշվիդայի-գ. Ահնիձոր - 20000 դրամ,
19) Սարգսյան Ռուդիկ Շալիկոյի-գ. Քարինջ - 15000 դրամ,
20) Մոսինյան Անահիտ Ժորայի-գ. Քարինջ - 15000 դրամ,
21) Միքայելյան Մանուշակ Մարտունի -գ. Քարինջ- 20000 դրամ,
22) Խաչատրյան Նաիրա Սամվելի-գ. Քարինջ - 15000 դրամ,
23) Պողոսյան Վովա Վերմիշի-գ. Քարինջ - 10000 դրամ,
24) Պապոյան Նարինե Ռազմիկի - գ. Մարց- 15000 դրամ,
25) Շահնազարյան Մայրանուշ Գրիգորի-գ. Մարց - 20000 դրամ,
26) Խաչատրյան Մարգո Ռուբենի -գ. Մարց - 20000 դրամ,
27) Ոսկանյան Ջհան Գալուստի -գ. Մարց - 10000 դրամ,
28) Գևորգյան Ավետիք Արամայիսի -գ. Մարց - 10000 դրամ,
29) Աբովյան Էմմա Հմայակի - ք. Թումանյան - 15000 դրամ,
30) Վանյան Բաղաբեկ Փաշոյի - գ. Շամուտ- 20000 դրամ,
31) Դավթյան Սեդա Գուրգենի - ք. Թումանյան- 10000 դրամ,
32) Կոնյան Թամարա Բորիսի - գ. Քարինջ- 15000 դրամ,
33) Գևորգյան Նաիրի Հրաչիկի - գ. Մարց- 20000 դրամ,
34) Ղուլինյան Սիրանուշ Վոլոդյայի - ք. Թումանյան- 10000 դրամ,
35) Եգանյան Էդիկ Հայկազի - ք. Թումանյան- 10000 դրամ

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Լ. ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 40-Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Գույքահարկի մասին օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով բնակիչների դիմումը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին ազատել հողի հարկի վճարումից՝համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2017թ. Նոյեմբերի 7-ի թիվ 40-Ա որոշման

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Հրաչիկ Կարապետի Հովհաննիսյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 20000 դրամ:
2.Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Սամվել Մաքսիմի Հովակիմյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 10000 դրամ:
3.Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Գյուլնարա Հրաչիկի Ալեքյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 20000 դրամ:
4.Թումանյան համայնքի Շամուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Հակոբ Հայկի Սարգսյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 12000 դրամ:
5.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Գնունի Հայկի Խաչիկյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 23000 դրամ:
6.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Կարինե Ռոբերտի Մխիթարյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 10000 դրամ:
7.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Ատոմ Նվերի Զաքարյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 11000 դրամ:
8.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Արա Վոլոդիայի Սարգսյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 6000 դրամ:
9.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Արթուր Մարկոսի Ասատրյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 14000 դրամ:
10.Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Սամվել Սարիբեկի Գևորգյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 13000 դրամ:
11.Թումանյան համայնքի Շամուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Էդվարդ Հովիկի Ղազարյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 12000 դրամ:
12.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Սամվել Ժորայի Խառատյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 15000 դրամ:
13.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Հունան Հովիկի Բախշինյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 14000 դրամ:
14.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Շիրակ Սանասարի Պետրոսյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 11000 դրամ:
15.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Գոհար Տիտանի Սարգսյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 36000 դրամ:

16.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Մհեր Լորիկի Սարգսյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 14000 դրամ:
17.Թումանյան համայնքի Աթան գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Արկադի Հովիկի Քոչարյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 18000 դրամ:
18.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Արա Սարիբեկի Հարությունյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 31000 դրամ:
19.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Արծվիկ Ռազմիկի Նասիբյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 26000 դրամ:
20.Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Սաշա Վանիի Արզումանյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 9000 դրամ:
21.Թումանյան համայնքի ք. Թումանյանի բնակիչ,սոցիալապես անապահով Աղունիկ Գարեգինի Մաթևոսյանյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝8000 դրամ:
22.Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Արտաշես Վահանի Վարդանյանի ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 20000 դրամ:
23.Թումանյան համայնքի Լորուտ.գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Եփրեմ Խալաթի Բախչինյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 34000 դրամ:
24.Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Քնարիկ Արմենակի Մելիքյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 19000 դրամ:
25.Թումանյան համայնքի Աթան գյուղի բնակիչ,սոցիալապես անապահով Փաշիկ Գրիգորի Քառյանին ազատել հողի հարկի վճարումից.
-արտոնության գումարի մեծությունը՝ 25000 դրամ:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ՋԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 115-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ԹՈՒՄԱՆՅԱՆ,2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵԿՈՄ ԿՈՄՊԱՆԻԱ>> ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՈՒՌԸ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24 ենթակետով, հաշվի առնելով, որ <<ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵԿՈՄ ԿՈՄՊԱՆԻԱ>> համատեղ ձեռնարկություն ՓԲԸ-ն կողմից կատարված ինքնակամ ձևափոխությունները չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում , կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, այդ ձևափոխումներն իրականացված չեն մայրհիմնակավանդակների կամ շենքի արտաքին պատերի հաշվին, չեն փոխվել կրող կոնստրուկցիաները ,հիմք ընդունելով համապատասխան որակավորում ունեցող <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ն կողմից չափագրված հատակագիծը և <<ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵԿՈՄ ԿՈՄՊԱՆԻԱ>> համատեղ ձեռնարկություն ՓԲԸ-ն փորձագետ Սարգիս Բասմաջյանի /01.11.2017թ/.դիմումը՝

որոշում եմ.

1.Օրինականացնել <<ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵԿՈՄ ԿՈՄՊԱՆԻԱ>> համատեղ ձեռնարկություն ՓԲԸ-ն սեփականությունը հանդիսացող 06-004-0011-0052 կադաստրային ծածկագրով հասարակական նշանակության շինությունում ինքնակամ ձևափոխված դուռը և պատուհանները, ճանաչել օրինական:

2.<<ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵԿՈՄ ԿՈՄՊԱՆԻԱ>> համատեղ ձեռնարկություն ՓԲԸ-ը՝ ինքնակամ ձևափոխված 1 դռան և 4 պատուհանի օրինականացման համար համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին վճարել 3500 դրամ:

3.Նշված ձևափոխությունները ենթակա է պետական գրանցման ԱԳ Կադաստրի Վանաձորի ՏՍ-ում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 116-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով չափագրին ծառայությունների եզրակացությունը, օբյեկտի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, տեղադրական հատակագիծը <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՍՊԸ-ն կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն և 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի ,,ա,, ենթակետով և հաշվի առնելով Սարիբեկ Սարգսյանի դիմումը՝

որոշում եմ.

1. Ճանաչել օրինական Թումանյան համայնք գ. Լորուտ, 15 փողոց, թիվ 4 փոստային հասցեում ինքնակամ կառուցված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված 432.20քմ մակերեսով անասնագոմի, ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.04647հա մակերեսով հողամասի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը. կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման. անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Լորուտ , 15 փողոց , թիվ 4 անասնագոմ :
5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն կառույցն իրականացրած անձին՝ Սարիբեկ Սարգսյանին կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
6. Համայնքի ղեկավարի տեղակալ Ե.Շաքարյանին՝ 5-օրյա ժամկետում դիմել ա/գ կադաստրի Լոռու տարածքային ստորաբաժանում սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 117-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով շահագրգիռ ծառայությունների եզրակացությունը, օբյեկտի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, տեղադրական հատակագիծը,ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն և 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի „ա„ ենթակետով և հաշվի առնելով Գնել Սարգսյանի դիմումը՝

որոշում եմ.

1.Ճանաչել օրինական Թումանյան համայնք, գ. Լորուտ 15 փողոց թիվ 1 փոստային հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված 857.38քմ մակերեսով անասնագոմի, ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.09295հա մակերեսով հողամասի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:

2.Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Լորուտ,15 փողոց թիվ 1 անասնագոմ :

5.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն կառույցն իրականացրած անձին՝ Գնել Սարգսյանի կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

6.Համայնքի ղեկավարի տեղակալ Ե.Շաքարյանին՝ 5-օրյա ժամկետում դիմել ա/գ կադաստրի Լոռու տարածքային ստորաբաժանում՝ սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 118-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով շահագրգիռ ծառայությունների եզրակացությունը, օբյեկտի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, տեղադրական հատակագիծը <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԱԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՍՊԸ-ն կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն և 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2005թ.դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի ,,ա,, ենթակետով և հաշվի առնելով Էմմա Գասպարյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Ճանաչել օրինական Թումանայն համայնք գ.Լորուտ 15 փողոց թիվ 5 փոստային հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված 857,86քմ մակերեսով անասնագոմի, ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.09257հա մակերեսով հողամասի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2.Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Լորուտ,15փողոց,թիվ 5 անասնագոմ:
5.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն կառույցն իրականացրած անձին Էմմա Գասպարյանին կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
6. Համայնքի ղեկավարի տեղակալ Ե.Շաքարյանին՝ 5-օրյա ժամկետում դիմել ա/գ կադաստրի Լոռիի տարածքային ստորաբաժանում՝ սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 119-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով շահագրգիռ ծառայությունների եզրակացությունը, օբյեկտի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, տեղադրական հատակագիծը<<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն և 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի ,,ա,, ենթակետով և հաշվի առնելով Վրեժ Այդինյանի դիմումը՝
որոշում եմ:

1. Ճանաչել օրինական Թումանայն համայնք գ. Լորուտ 15 փողոց թիվ 3 փոստային հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված 428.27քմ մակերեսով անասնագոմի, ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.04647հա մակերեսով հողամասի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանայն համայնք, գ.Լորուտ 15 փողոց թիվ 3 անասնագոմ:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն կառույցն իրականացրած անձին՝ Վրեժ Այդինյանին կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
6. Համայնքի ղեկավարի տեղակալ Ե.Շաքարյանին՝ 5-օրյա ժամկետում դիմել ա/գ կադաստրի Լոռիի տարածքային ստորաբաժանում սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 120-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԼՈՐՈՒՏ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՉԿՈՍԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ,ԴՈՒՍՏՐԻԿ ԳԱՌՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐԹՈՒՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով,<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով,<<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով,ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի քաղվածքը, հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով քաղաքացի Ա. Ասատրյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Վերականգնել և ճանաչել քաղաքացիներ Արթուր Մարկոսի,Դուստրիկ Գառնիկի և Մարգարիտ Արթուրի Ասատրյանների համատեղ սեփականության իրավունքը համայնք Թումանյան, գյուղ Լորուտ, փողոց 1 թիվ 17 հասցեի /022-009 ծածկագրի/ 0,1524 հա հողամասի և հողամասում 1955 թվականին կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:

2: Վերականգնել և ճանաչել քաղաքացիներ Արթուր Մարկոսի,Դուստրիկ Գառնիկի և Մարգարիտ Արթուրի Ասատրյանների համատեղ սեփականության իրավունքը համայնք Թումանյան, գյուղ Լորուտ,փողոց 3 թիվ 14/1 հասցեի /048-0003 ծածկագրի/ 0;15488 հա բնակավայրերի բնակելի նշանակության հողամասի նկատմամբ:

3.Վերականգնել և ճանաչել քաղաքացիներ Արթուր Մարկոսի,Դուստրիկ Գառնիկի և Մարգարիտ Արթուրի Ասատրյանների համատեղ սեփականության իրավունքը համայնք Թումանյան, գյուղ Լորուտ 0104-0039 ծածկագրի 1,1242 հա, 0140-0018 ծածկագրի 0,46568 հա, 0140-0020 ծածկագրի 0,37538 հա, 0142-0013 ծածկագրի 0,15425 հա վարելահողերի և 0106-0002 ծածկագրի 3;0 հա խոտհարքի նկատմամբ:

4.Հատկացումից ավել զբաղեցրած հողամասերը օրենքի ուժով ճանաչել քաղաքացիներ Արթուր Մարկոսի,Դուստրիկ Գառնիկի և Մարգարիտ Արթուրի Ասատրյանների համատեղ սեփականություն:

5.Նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, կառուցված չեն առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:

6.Զբաղեցրած հողամասն ընդգրկվածն չէ ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին , չի առաջացնում սերվիտուտ:

7.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

8.Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

9.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 21.07.2017թ. թիվ 72-Ա որոշումը:

10.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք Ա. Ասատրյանի դիմումը, անձնագրի պատճենը, <<ԱԿԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի և շինության հատակագծերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 121-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի <<գ>> ենթակետով և հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2280171 վկայականը և քաղաքացի Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Քաղաքացի Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանի սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ գ.Քարինջ բնակելի տանը (ծածկագիր՝ 06-110-001-000003-001) մակերեսը՝ 200,0 քմ ,0.396 հա , տնամերձ հողամասին (ծածկագիր՝ 06-110-001-000003)տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Քարինջ Մերուժան Եղինյանի փողոց,տուն 53>> հասցեն :
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**